



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Թիւ 467  
Ապրիլ 30, 1991

Մեծայարգ  
Տիար Նուպար Տօրեան  
Ս. Խաչ Եկեղեցոյ  
Ծխական Խորհուրդի Ատենապետ  
Եռնիքն Սիթի.

Յարգելի Տիար Տօրեան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 11, 1991 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 3, 1991-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին վեց անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Ժէք Արզարեան  
Սիլվիա Պոզոյեան  
Կարի Պրրկրաֆ  
Տոն Տոնոֆրիս  
Էտուրրո Սահակեան  
Խաչիկ Սարիմինասեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովին Դիւանի, ինչպէս նաեւ Ընտրողական եւ Հաշուեքննիչ Ցանձնախումբերու ընտրութիւնները պէտք է կատարուին երկպառօնի ցանկի մը վրայէն՝ համաձայն թեմական Կանոնադրութեան:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգևէ:

Սիրոյ ողջունի

Խաժակ Եպս. Պարսամեան  
Առաջնորդ